գլուխն։ Եւ ապա գայր անցանէր արքայ զճանապարհայն և զօրս գտանէր խմող ծխոյն, գանել տայր խաւէքոց մերձ ի մահ։ Եւ եղև սաստանութիւն քաղաքիս առ հասարակ։ Իսկ յայգուցն մունետիկ աղաղակեալ յամենայն քաղաքս՝ եասաղ արարին զփակեղս քրիստոնէից, զխայտ և զկապուտն՝ զի բնաւ մի երևեսցի։ Եւ ի մեծամեծաց մինչև ցփոքունս եղին գտակ ի գըլուխ եւ ղալփաղ, եւ զհանդերձս փոխեցին ի վատ եւ ի տգեղս ամենեւիմբ։ Եւ արքայ հանապազ շրջէր ի թէպտիլ՝ տեսանել թէ զի՞նչ լիցէ արարմունք իւր։ Եւ Վանին այն որ եկեալ պղտորս բազումս արար սոցա եւ տուեալ գիր ի ձեռս Նմա թէ Աշխարհ այսպէս կառավարի, առաջին՝ զի մի լիցին խմել զմուխն և կանայք մի խայտառակեսցին ի փողոցս և քրիստոնեայք մի համարձակեսցին ի քաղաքս կամ առ Տաճիկս լինել հաւասար զգեստին և բարուց, և այսպիսիք անասելիք։ Եւ քան զայն արարմունք արքային՝ ընդ աւուրբ չունեալ պիղծն յԱրզռում ի տեղի իւր, եւ զի խղձ սրտին կատարեցաւ, որ յառաջագոյն և զեկեղեցին Արզռումայ քակել ետուր եւ մօլնա կանչեց զի մի կրկին լիցի քրիստոնէից։ Առաքեցին հրաման եւ Վանայ եկեղեցեացն, եւ ծառայքն արքային որ կան անդէն՝ ոչ թողին քակել։ Բակեցին եւ ի Դարս եկեղեցիք, քակեցին եւ ի Շէպինղարահիսար։

Եւ ապա յետ Ը աւուր գործիք Փռանկին որ ի ծովու՝ յաջողեցաւ, և ետ բերել զգլուխ Թէլլաք Մուստաֆայ փաշային, որ մուհափէզէ ի կղզին Միտիլլի կայր ի պահպանութիւն կղզոյն, եւ զամենայն գանձ եւ զկարասի Նորա էառ յարքունիսն։ Եւ զքէհապէկն մազուլ արարին և եդին ի տեղի Նորա զոմն զԴըրճիպաշի, որ էր երբեմն մունզուր Բեօփրուլուի, եւ արար զիւր քէհեա մազուլ եւ եդ զոմն Իպրահիմ։ Եւ